ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 31 » օգոստոսի 2022թ. № 146-Ա

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ ենթակետերով, ինչպես նաև հիմք ընդունելով Լոռի Բերդ համայնքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 27-ի թիվ 58-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը հաստատելու մասին» Լոռի Բերդ համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 27-ի թիվ 14-Ա որոշումը.

**որոշում եմ.**

**1.** Լոռի Բերդ համայնքի բնակչին համայնքի բյուջեից հատկացնել սոցիալական օգնություն համաձայն հավելվածի:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակչին:

**3.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝** **Է. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**

Կ.Տ

**2022թ. օգոստոսի 31**

**գ. Լոռի Բերդ**

Հավելված.
ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավարի
2022թ. օգոստոսի 31-ի №246-Ա որոշման

# Ց ՈՒ Ց Ա Կ

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Նանե Գեղամի Գրիգորյան – 30.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Բովաձոր
2. Աննա Ռաֆիկի Պողոյան – 30.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Կողես
3. Հերիքնազ Իշխանի Հայրապետյան – 40.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Յաղդան
4. Վանիկ Արսենի Սարգսյան – 30.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Ուռուտ
5. Աննի Վարազդատի Մարդոյան – 40.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Ուռուտ
6. Ալբերտ Ռազմիկի Մանուկյան – 40.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Ուռուտ
7. Աննա Տիգրանի Շահբազյան – 40.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Ուռուտ
8. Իշխան Հարությունի Պապյան – 30.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Լեջան
9. Աննա Գագիկի Պողոսյան – 40.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Սվերդլով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 01»սեպտեմբերի 2022թ. № 147-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387- Ն որոշման պահանջներով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ուռուտ գյուղի 06-105-0014-0004 ծածկագրով անշարժ գույքին տրամադրել ՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Ուռուտ 3-րդ փողոց, թիվ 3 փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Է. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**

Կ.Տ

**2022թ. սեպտեմբերի 01**
**գ. Լոռի Բերդ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«02» սեպտեմբերի 2022թ. № 148-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 01.04.2021Թ. ԹԻՎ 61-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-ին և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝ հիմք ընդունելով Ռազմիկ Սուրենի Մարգարյանի կողմից ներկայացված դիմումը, համայնքապետարանի կողմից տրված հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 18.04.1991թ. N 1 որոշումից քաղվածքը, «Ա. Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   ԵՄ.**

1. Վերականգնել Լոռի Բերդ համայնքի Ուռուտ գյուղի 06-105-0037-0006 ծածկագրի տակ գտնվող 0.10228 հա բնակելի կառուցապատման հողամասի հողհատկացման հիմքերը՝
ա/ Լոռի Բերդ համայնքի 06-105-0037-0006 ծածկագրի հողամասի մակերեսը 0.10228հա
բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն՝ հավելվածի:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0.10228 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը, որը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց բաժնային սեփականության իրավունքով վերահատկացնել՝ Ռազմիկ Սուրենի Մարգարյանին, Նազիկ Լևանի Մարգարյանին,

Նորայր Ռազմիկի Մարգարյանին, իսկ մինչև՝ 15.05.2001թ. կառուցված բնակելի տների և օժանդակ շինությունների նկատմամբ օրենքի ուժով, անհատույց ճանաչել նրանց համատեղ սեփականության իրավունքը:

3. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ուռուտ գյուղի 06-105-0037-0006 ծածկագրի տակ գտնվող 0.10228 հա մակերեսով հողամասում, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, մինչև 15.05.2001թ. կառուցված՝ բնակելի տան 30.08 քմ մակերեսով, 5.0 քմ մակերեսով բնակելի տան, 37.5 քմ մակերեսով բնակելի տան, 12.24 քմ մակերեսով բնակելի տան, 35.94 քմ մակերեսով բաց պատշգամբի, 10.52 քմ մակերեսով ամառային խոհանոցի, 36.99 քմ մակերեսով գոմի նկատմամբ համաձայն՝ հավելվածի ճանաչել Ռազմիկ Սուրենի Մարգարյանի, Նազիկ Լևանի Մարգարյանի, Նորայր Ռազմիկի Մարգարյանի համատեղ սեփականության իրավունքը:

4. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ուռուտ գյուղի 06-105-0037-0006 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ Լոռի Բերդ համայնք գյուղ Ուռուտ, 1-ին փողոց, թիվ 3 փոստային հասցեն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Է. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**

կ.տ

**2022թ. սեպտեմբերի 02**
**գ. Լոռի Բերդ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«06» սեպտեմբերի 2022թ. № 149-Ա**

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՎԵՐԴԼՈՎ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածովի 24 կետով, հիմք ընդունելով Մարինե Սուրենի Անանյանի դիմումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 01.04.1991թ. թիվ 15 որոշումից քաղվածքը, ինչպես նաև «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը՝

**ո ր ո շ ու մ ե մ**

**1.** Վերականգնել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Սվերդլով գյուղի 06-101-0158-0042 կադաստրային ծածկագրով 1.01536 հա վարելահողի հողհատկացման փաստաթղթերի հիմքերը՝

ա/ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Սվերդլով գյուղի 06-101-0158-0042 կադաստրային ծածկագրով վարելահողի մակերեսը՝ 1.01536 հա

բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն՝ հավելվածի:

**2.** Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Մարինե Սուրենի Անանյանին:

**3.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝** **Է. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**

Կ.Տ

**2022թ. սեպտեմբերի 06**
**գ. Լոռի Բերդ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

« 07»սեպտեմբերի 2022թ. № 150-Ա

**ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387- Ն որոշման պահանջներով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ուռուտ գյուղի 06-105-0028-0001 ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Ուռուտ 7-րդ փողոց, թիվ 1 փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝** **Է. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**

կ.տ

**2022թ. սեպտեմբերի 07**
**գ. Լոռի Բերդ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

« 07 » սեպտեմբեր 2022թ. № 151-Ա

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

**1.** Գումարել Լոռի Բերդ համայնքի ավագանու հերթական նիստ 2022 թվականի սեպտեմբերի 13-ին ժամը 11:00-ին Լոռի Բերդի համայնքապետարանում՝ հետևյալ օրակարգով համաձայն՝ հավելվածի:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝** **Է. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**

կ.տ

**2022թ. սեպտեմբերի 07**
**գ. Լոռի Բերդ**

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ**

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

**Անցկացման վայրը.** Լոռի Բերդի համայնքապետարան

**Անցկացման ժամանակը.** 13.09.2022թ. ժամը 11:00-ին

**1.** Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը:

**1. 1.** Գումարել Լոռի Բերդ համայնքի ավագանու նիստ 2022թ. սեպտեմբերի 13-ին ժամը 11:00-ին Լոռի Բերդի համայնքապետարանում՝ հետևյալ օրակարգով.

1) Լոռի Բերդ համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 13-ի նիստի օրակարգի հաստատում:

**(Զեկուցող՝ Է. Մելիքսեթյան)**

**2)** ) Լոռի Բերդ համայնքի 2022 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին

**(Զեկուցող՝ Մ. Հովսեփյան)**

**3**) Լոռի Բերդ համայնքի 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին

**(Զեկուցող՝ Մ. Հովսեփյան)**

**4**) Լոռի Բերդ համայնքի վարչական տարածքում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակության փոփոխման մասին

**(Զեկուցող՝ Ք. Մելիքջանյան)**

**5)** «Ուռուտի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ին գույք նվիրաբերելու մասին

**(Զեկուցող՝ Մ. Հովսեփյան)**

2. Ելույթներ, առաջարկություններ:
3. Նիստի փակում:

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**